

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դանիայի գրող Գեորգ Բրանդեսի յօդուհանքը.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ինչպիսի բացատրութիւն է
էր են արդեօք հարցաքննութիւնները. Ռուսաց
թատրոն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Վերսալի եօթնամսեայ յօդուհանքը. Ար-
տաքին լուրեր.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մատենագրութիւն:

ԴԱՆԻԱՅԻ ԳԵՈՐԳ ԲՐԱՆԴԵՍԻ ԅՅՈՒՆԸ

Քաղաքում ենք ռուսաց լրագրողներին հե-
տեւեայ տեղեկութիւնները Դանիայի կոպէն-
հագեն քաղաքում նորերում կատարված
տնտեսական մասին:

Հոկտեմբերի 14-ին լրացաւ դանիացի
պատմաբան և կրիտիկոս Գեորգ Բրանդեսի
գրական գործունէութեան 25-ամեակը: Երե-
կարի բարեկամները և պաշտօնակիները ճաշ-
կերպով տուեցին նրան կոպէնհագենում:
Այդ ճաշկերպովին մասնակցեցին ոչ միայն
կոպէնհագեն քաղաքում ապրող, բայց և
ամբողջ Դանիայի գրականութեան, դե-
պարտեստի և քաղաքական աշխարհի ա-
մենանշանաւոր ներկայացուցիչները:

Աչքի ընկնող երեւոյթ էր, որ այդ տօնա-
խմբութեանը մասնակցում էին և Բրանդե-
սի գրականական ուղղութեան անհատ
թշնամիներն էր Այդ տեսակ երեւոյթ հնա-
րաւոր են միայն քաղաքակրթ լեւոսպա-
րում: Եւ ահա Բրանդեսի յայտնի թշնամի-
ներին մին, պրոֆեսոր Հեֆլինգ ճաշկե-
րպովին ժամանակ իր արտասանած ճառը
վերջացրեց հետեւեայ խօսքերով. «Այն օրը,
երբ Գեորգ Բրանդես կը դադարի դանիա-

կան ինտելիգենցիան ղեկավարելուց, այն
օրը կանհետանայ մեր միջից այն հսկայ և
հանձարեղ մարդկանցից մէկը, որին ստեղ-
ծել է Դանիան ներկայ դարում»:

Այդ ճառին ինքն Բրանդես պատասխա-
նեց առաջարկելով գիտութեան և գեղա-
րուեստի կենացը. «Ես իմ բոլոր ոյժերս
գործ եմ դրել ասեց նա, որպէս զի հա-
զորեմ ձեզ իմ երիտասարդութեան ժամա-
նակ սրտումն ամփոփած այն գործը սէրը,
որ ես պահպանեցի քսան և հինգ տարի շա-
րունակ, դէպի անհատական զարգացումը,
զուգընթացաբար իմ ատելութեան հետ դէպի
նախապաշարմունքները: Այժմ, քսան և
հինգ տարուց յետոյ, ես ասում եմ. եթէ
մեզ աջողիլ փոփոխել Դանիայում մեր թէ-
նիւթական և թէ հոգեւոր կեանքի պայ-
մանները, փոփոխել մեր ազգի նիւթական
և մտաւոր զարգացման պայմանները,—այն
ժամանակ, չը նայելով, որ մեր երկիրը
փոքրիկ երկիր է, մեզ կաջողիլ ստեղծել
այնպիսի մի մտաւոր կեանք, որը օրինակե-
լի կը համարվի ամբողջ Եւրոպայի հա-
մար»:

Ճաշկերպովին ժամանակ ստացվեց յայտնի
գրող Իբսենի հեռագիրը հետեւեայ բովան-
դակութեամբ. «Որպէս բարեկամ եւ երախ-
տապարտ ընթերցող ուղարկում եմ ձեզ
իմ սրտաղին շնորհաւորութիւնս մտաւոր
աղատութեան գործին ձեր մատուցած
հանձնարարութեան համար»:

Ապա ստացվեց մի հեռագիր և Բիէրնսոնից, որը
յայտնի էր իր հեռագրի և կառավարութիւնը,
որ այդ վերջինը մերժեց զրամական օժանդակու-
թիւն նշանակել Բրանդեսին: «Մեծ մոռո-
ղին չէ կարելի ոչնչացնել սովի միջոցով»,
ասված է հեռագրի մէջ:

Երեկոյեան կոպէնհագենի փողոցները լի
էին բազմութեամբ. աւելի քան հազար
ուսանողներ, արհեստագործներ և քաղաքա-
ցիք, ջահերը ձեռքերին՝ շրջապատում էին
այն տունը, որտեղ ճաշկերպով էր տըր-
վում Բրանդեսին: Ժողովուրդը հազարներով
խառնված էր արտուարներ վրա և փողոց-
ներում և ողորկված աղաղակներով ողջու-
նեց Բրանդեսին, որը երևաց բաց պատու-
հանքի մօտ: «Բարձր բռնեցեք ձեր ջահերը,
սկսեց խօսել նա, մեզ հարկաւոր է կրակի
աւելի շատ կրակ մեր գործերի մէջ, մեր
ձգտումների մէջ, մեր ամբողջ կեանքում:
Ջահերի լոյսը,—դա մտքի լոյսն է, այդ
բոցը չի հանգցնի ոչ փոթորիկը, ոչ էլ ա-
մենագործի բերանների շունչը. լուսաւորե-
ցեք այդ բոցերի միջոցով կեանքի բոլոր
անկիւնները, տաքացրեք ձեր սրտերը, տա-
քացրեք այն զգացումները, որոնք դէպի
բարին են ձգտում: Հաւատացեք ինձ. այն
ոգին որն իր հետ լոյս է բերում նա չար
ոգի չէ, այլ բարի հրեշտակ, որը իր հետ
շնորհում է ձեզ գիտականութեան և ճշմար-
տութեան կրակը,—կեանք է, նրա լոյսը
երբեք չի հանգչի»:

Մինչև ուշ գիշերը կոպէնհագենի փողոց-
ները լի էին բազմութեամբ, որի միջից
անընդհատաբար լսվում էին «կեցցեք Բրան-
դես», «կեցցեք ազատ զաղափարի համար
մարտնչողը» ողևորված աղաղակներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉՈՎ ԲԱՑԱՍԻՒՆ

Ամառը կամ լրագիրը մեզանում ունենում է
բաւական թիւով բաժանորդներ իր գոյութեան

9) Նաքովը	Քայազ	Գեղամ
10) Թարայ	Աբել	Հարմա
11) Աբրահամ	Նիսոս	Արամ

Այս տաժանեկի գործը գլուխ բերելուց յետ
պարզում է խորհրդանշան իր կորացած մէջը, սըր-
բում է ձակուկ քրոնիքը և ձայն է արձակում այդ
հիանալի ճարտարապետը—«Իսկ դու, ով ուշիւ
ընթերցասէրը, հայեաց աստանօր ընդ հաստա-
տութիւն կարգի երկը ազգայն մինչև ցԱբրահամ,
ցՆիսոս և ցԱրամ, և դարձագիր»:

Նայում ես արդարեւ. սակայն քննէ: Նոյնացնե-
լով Ներքովը Բէլի հետ, մեծ խորհրդանշան խան-
դարել է իր ստեղծած և ձեռագործած կարգը,
խախտել է Բանային ազգաբանութեան հաստա-
տութիւնը և մեծք տեսնում ենք Բէլ—Ներքովը
Երեւոյթի լուսաւորութեան հոգեւորական մի կէտ՝ և մե-
ծալատակ շինութեան կործանումն: Այս փա-
ռակի տակ մնում է Մար Աբաս Կատինան էլ և
իր ժամանակաշրջանի մեծ կէտերը Բէլ—Հայկ և
Նիսոս—Արամ:

Բայց խորհրդանշան ինքն մնում է կանգուն (այդ
աւերակոյտի վրա. մնում է կանգուն իր նպատա-
կին էլ, որ էր մեծացնել, բարձրացնել, առաքի-
նացնել, զիւցադրացնել իր ազգը և խրախոյս
կարգալ նրան՝ ամբարտակ կառուցանել այն անա-
ղին ողորման առաջ, որ կոչվում էր պարսկական
հալածանքը: Իր այդ դիրքի մէջ, պատմութեան այդ
անշնչելի մագաղաթը ձեռքին, խորհրդանշան յիշեց-
նում է ինձ անապատում Մովսէսի ձեռքով նշա-
նակի վրա բարձր, ժողովրդի աչքի առջև արձա-
նացած պղնձե օձը, որին նայում էր, պատուհաս
օձերի հետ կռւի միջոցին, օձահարած ժողովուրդ
և ապրում էր միտնելու վտանգից:

Միշտ մի և նոյն խորհրդանշան՝ մեծ, ահեղ ու
սքանչելի, յոյս, հաւատ և խրախոյս իր հայր հա-
մար:

Կռւելով այդ նոր պղնձե օձի զօրաւոր նշանի
ներքոյ, Վահան Մամիկոնեան և անշուշտ հետն էլ
խորհրդանշան իրան այնքան սիրելի և մեղ համար
յաւէտ երկրպագելի Ասպետը, Սահակ Բագրա-

առաջին տարին, բայց հետզհետէ նրա բաժա-
նորդների թիւը սկսում է պակասել և մի քանի
տարուց յետոյ նոյն իսկ հրատարակութիւնը դա-
դարում է գոյութիւն ունենալուց: Աչքի ընկնող
բացառութիւն մեր մէջ կազմում է «Մշակ» լրա-
գիրը: Ռուսաստանում հայոց մամուլը, սկսած 1872
թիւից մինչև այսօր, բաժանվեց երկու որոշ բա-
նակների վրա. մի կողմն էր «Մշակը», միւս կողմ՝
բոլոր միւս պարբերական հրատարակութիւնները:
«Մշակը» հասարակութեան փրկութիւնը տեսնե-
լով միայն առաջադիմութեան մէջ, իբրեւ առաջա-
դէմ լրագիր, հաւատացած էր որ տանում է հա-
սարակութիւնը դէպի փրկութիւնը, որովհետեւ հա-
սարակութեան կաղաքակրթութեան կատարելա-
տիպը բարոյական վերանորոգութեան մէջն էր
միայն տեսնում: Հրապարակախօս պուրիլիստ լի-
նել հնչտ բան չէ. կարելի է նոյն իսկ վիպասան,
բանաստեղծ լինել, բայց իբրեւ հրապարակախօս
անընդունակ. հրապարակախօսը պէտք է հասա-
րակաց կարծիքին լուրջ ուղղութիւն տալու հա-
մար ունենայ բազմակողմանի մտաւոր զարգա-
ցում, հակառակ դէպքում, երբ մարդը իր մտա-
ւոր զարգացմամբ անպատրաստ է պուրիլիստա-
կան գործունէութեան, նա սխալ մտքեր տարա-
ծելով կարող է մեծ միաս բերել հասարակու-
թեան, ի չար գործ դնելով մամուլի ոյժը:

Որքան յանցաւոր է այն մամուլը, որը ի չար
գործածելով իր հեղինակութիւնը, փոխանակ ա-
ռաջնորդելու, մոլորեցնում է հասարակութեան
կարծիքը, բայց ամուրի ամենապիտանաւոր թը-
ղուկ ներկայացուցիչներ նրանք են, որոնք իբր
թէ անգիտակցաբար են գործում ու սխալվում:
Հնացած գաղափարի պաշտպան խաւարի որդիքը,
խորը համոզված են թէ իրանց յայտնած մտքերով

տունի, տանում են կռիւը և խոնարհեցնում են
գոռող պարսկին իրանց հետ հաշտութիւն կապե-
լու:

Խորհրդանշան համարում է իր նպատակին, ոչ մի-
այն մի նեղ ու կարճ ժամանակաշրջանի այլ եր-
կայն ու երկար դարերի համար:

Յարափոփում, յեղաշրջող ժամանակի հոսանք-
ներում, թէ բաղադրել ու թէ վառուելը աստղի
տակ, ամեն անգամ որ բարձրացրել է հայն աչ-
քը, նա տեսել է միշտ այդ բարձունքների վրա
խորնոյ փհհափառ ծերունին իր չլախտնից սկայ:
զիւցադրանքների, հայկազանց հարստութեան Ոգի-
ների հետ:

Խորհրդանշան ստեղծելով մի զիւցադրական աչ-
խարճ, այնքան կենսական ոգի է տուել նրան,
այնքան ճշմարտաման կեանք, որ մինչև իսկ նը-
րանք իր ժամանակակիցներից, որոնք գուցէ աչքով
իսկ տեսան թէ ինչպէս այդ աստուածանման
բրուտը լմում էր պատմական հատուկությունների,
զրոյցների և աւանդութիւնների և երգերի կաւը
և իր՝ ստեղծող երեակալութեան հիւթովը զան-
գելով իր դուրբի վրա շինում, որբում, որդեկում
և ձեռակերպում էր կենդանի, չնչաւոր անօթներ,
մեծամեծ գաղափարներով ողիացած, հաւա-
տում էին նրանց նախատիպերի իրօք գոյութիւն
ունեցած լինելուն և երբեք ոչ մի տեղ, ոչ մի
խօսքով կամ ակնարկով չասացին, չիմացցին
թէ խորհրդանշան մի զիւցադրական աշխարհ է ա-
ռապելաբանում: Ժողովուրդն էլ առաջին ան-
գամից ընդունեց այդ զիւցադրական աշխարհը, որի
մարմնացած գաղափարները կրօնի նիւթ դար-
ձան իր համար:

Յաջադիւորները, նախանձոտները միայն խորե-
նացու այդ զիւթի մեծագործութիւնը տեսնելով,
հիացման փոխանակ զայրացան և կախարհ հա-
մարեցին նրան, ուստի և սրբապիղծ ձեռքերով
կրկեցին նրա գերեզմանի հողակոյտը և նշխար-
ները մատնեցին ջրերի ալիքներին:

Ա. Մ. Եղեկեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

MOISE de KHOREN et les Généalogies patriar-
cales. par A. Carrière.

ՄՈՎԱՍԵ ՌՈՐԵՆԱՅԻ և նահապետական ազգաբա-
նակութիւնը:

(Տես «Մշակ», № 108 և 120)

Աղամբ մինչև Աբրահամ՝ քսան և մէկ նահա-
պետ ժողովուրդ կայ, հօրից որդի հաշուելով:
Նոյ՝ տաննորդը նահապետն է, Աբրահամ՝ քսան
և մէկերորդը: Այդքան ծնունդ պէտք է հաշու-
ուրենք և Գամի ու Գաբէթի գաւազանների վրա
էր Ջրհեղեղից առաջ ազգաբանական գաւազանը
մէկ է, իսկ Ջրհեղեղից յետո՝ նա բաժանված է ե-
րեքի, որոնց ծայրերին կեցած են Սեմ, Գամ, Գա-
բէթ: Ուրենք առաջին նահապետները, Նոյով
միայն տարը հատ, Սեմի և եղբայրների համար
հասարակաց են: Ուստի Գամի և Գաբէթի համար
էլ մի և նոյն տանն նահապետները արդէն կան,
այժմ այս տանն վրա պէտք է իւրաքանչիւր գա-
ւազանի համար, գալ էլի տանն և մէկ հատ, որ
դառնայ քսան և մէկ:

Արդէն տեսանք, թէ խորհրդանշան աշտեղից
այնտեղից ժողովելով և պակասը իրնից աւելաց-
նելով գտաւ եօթնական նահապետ՝ Նիսոսից—
Բէլ և Արամից—Հայկ: Գաբէթի պէտք է չորսա-
կան անուն: Սուրբ Գիլգամէշ տալիս է Գամ—Գուշ—
Ներքովը և Գաբէթ—Գամբը—Թորգոմ: Պէտք է
գտնել մի մի անուն էլ:

Խորհրդանշան Գուշի և Ներքովի մէջ տեղ զը-
նում է մի նահապետ՝ անունը Մեստրիմ: Այս
Մեստրիմը ս. Գրքում Գուշի եղբայրն է համար-
վում և ոչ թէ որդին. որդին Ներքովին է: Իսկ
Խորհրդանշան սովորութիւնն է ծննդաբանութիւնը
ամ յաջորդութիւնը հօրից որդի կարգել. բայց

որովհետեւ իրան մի նահապետ էր հարկաւոր, նա
այստեղ զարտուղութիւն է անում և ներս է առ-
նում Մեստրիմին, հակառակ միւս ժամանակա-
գործներին, և արդարացնում է իրան այսպէս,
թէ ինքն այդ աղպէս կարգված է գտել մի ու-
շիմ և ընթերցասէր Արորուց և հաւատարիմ է ե-
րեացել իրան, որովհետեւ Մեստրիմը Մեծա-
րիմ է, որ Եփրատիս է հասկացվում. ժամանակա-
գործներից շատերն էլ Ներքովին, որ Բէլն է,
Եփրատից եղած ասելով, իրան հաւանեցուցել
են թէ ստոյգն այդպէս է, Եփրատից Եփրատի-
յին սահմանակից լինելու պատճառով: Ուրենք
թող Ներքովը Մեստրիմի որդին կամ յաջորդը
լինի, որով ինքն էլ հարթած կը լինի իր աւելն
եղած գիտարութիւնը, զտնելով վնասած անու-
նը: Արդպէս ուրենք, հաւաւանիլ չորս անուն
Գամ—Գուշ—Մեստրիմ—Ներքով: Այս դժուա-
րութիւնն այստեղ այդպէս վերացնելով, ճանա-
պարհն արդէն բացված էր միւսի համար էլ, և
Խորհրդանշան առանց տատանութեան աւելաց-
նում է Գաբէթական գաւազանի վրա Թորգոմ ա-
նունը՝ ընդ մէջ Թորգոմի և Գամբի: Այս Թորգոմն
էլ Գամբի եղբայրն է: Խորհրդանշան խնդրած ցու-
ցակն արդէն լրացած է և հաւասար է Սեմա-
յինին, Այսպէս՝

Սեմ	Գամ	Գաբէթ
Արփաքսատ	Գուշ	Գամբ (կամ Գամբը)
Կայնան	Մեստրիմ	Թորգոմ
Սաղա	Ներքով	Թորգոմ

Այս չորսական անուններին վրա աւելացնենք
այժմ այն եօթնական անուններն էլ, որ արդէն
ունենք, և կը ստանանք Խորհրդանշան ազգաբանու-
թեան լրացած երեք գաւազանները այսպէս՝

1) Սեմ	Գամ	Գաբէթ
2) Արփաքսատ	Գուշ	Գամբ
3) Կայնան	Մեստրիմ	Թորգոմ
4) Սաղա	Ներքով	Թորգոմ
5) Երեւ	Բէլ	Հայկ
6) Փաղեկ	Բաբ	Արմենակ
7) Ռազաւ	Անբեկ	Արամայիս
8) Սերուք	Արբէլ	Ամասիա

հասարակությունը առաջնորդում են գեպի փրկարար ինքնաճանաչությունը: Կարգադրող, տեսչի ինչքն են գրում: Համարությունը են քարոզում, հասարակության մասին սրտացալություն են առնում, հաւատացնում են թէ՛ իրանց նուիրել են հասարակության ծառայությունը: Ինչքան հրաշալի են այդպիսի խոսքերը արտաբերում, բայց պատռեցէ՛ք նրանց դէմքի դիմակը և տեսէ՛ք ինչ հնարքներ են գործ դնում միամիտներին հաւատացնելու, որ իրանք են առաջնորդում հասարակությունը, որ իրանք են հասարակության ցոյց տալիս այն ուղին, որով նա կարող է հասնել ճշմարիտ լուսաւորության: Եւ այդ բոլորը նրանք առնում են, որովհետեւ գիտակցական խաբէրայությունից դուրս չը կայ նրանց համար գոյությունը: Երկու դրական հակառակորդ բանականներն համեմատելով ընթացողների խորհրդի ամենաբարձր մասերը, ազգային մտաւոր կեանքով հետաքրքրողներին կոնսիդերելով բաժանվեց կրկու որոշ խոսքերի: Նա, որը գրում էր նոր կեանք, նոր իդէալներ ընդունելու անհրաժեշտությունը (Մշակ) լըրադրի անյաղժիկի դրօշակի տակն է: Ամբողջ 19 տարի ոչ մի օրգան հայերի մէջ չը կարողացաւ «Մշակի» հետ մրցել: Եւ դա լոկ խօսք չէ, այլ իրականություն է: 19 տարի գոյություն ունեւորելով, «Մշակը» պահպանվել է մի և նոյն մակերեսով: Իրաւ, իմացել է պահպանել հասարակության մէջ մի և նոյն դիրքը, ինչ որ էր տարիներէ առաջ: Եւ իր տակուն գործունէության շըրջանը ընդարձակվեց, այնպէս որ «Մշակի» գոյությունը դարձաւ մի անապատայն պահանջ ժողովրդի համար: Արդեօք խաւարամիտների կարծիքով ինչին վերադրել այդ մեղք կարծում ենք այն պարզ հանգամանքին, որ «Մշակը» իմացել է դրաւ մեր հասարակության մէջ հասարակաց օրգանի դիրքը, այն էլ առաջադէմ կուսակցության օրգանի: Նա Կ. Պոլսի «Արեւիկ» լրագրի կամ թիֆլիսի օրհասական օրգանների պէս չը շոգորթից ժողովրդի ամեն տեսակ վատ կրքերին, չը խտրարկեց, զուլեւը կախ չը գցեց իր գոյությունը պահպանելու համար: Մամուլի կոյուղը լաւ ըմբռնելով, «Մշակը» բոլոր ջանքերը գործ է դրել մաքաւելու հասարակության կործանիչ պակասությունների դէմ: Եւ ոչ թէ ինքն է ենթարկվել այդ պակասություններին, ոչ թէ ինքն է ենթարկվել հասարակության բարոյական ստոր դարձումները, այլ միշտ հասարակությունից բարձր է կանգնել: Ոչ թէ ինքը քաշ է ցատկիս գոյություն համար հասարակության ետեւից, այլ իր ետեւից է քաշում հասարակությունը: Ոչինչ այնքան վտանգաւոր է միջասակար չէ, որքան մարդկանց յամառութիւնը վտանգութեամբ շարունակել հասարակաց որ և է գործունէութիւն, որին իրանք ձեռնհաս չեն: Թող այդ լաւ դաս լինի մեր թղտի հրապարակախօսներին, որոնք ոչինչ մտաւոր ընդունակութիւն չունենալով, կատարելապէս անպատրաստ լինելով հրապարակախօսական գործունէութեան համար, համարձակվում են զենկավարել հասարակաց կարծիքը իրանց տհաս մտքերով:

Պօղոս Զաքարեանց

ՀԱՐԿԱՌՈՐ ԵՆ ԱՐԿԵՐԻ ՀԱՐՑԱՐԵՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այդ հարցը վաղուց արդէն զբաղեցնում է մանկավարժներին և, ժողովրդական լուսաւորության միևնույն շրջանակներին կարգադրություններից յետոյ, օրվան չարք է դարձել մանկավարժական աշխարհում: Նրանք, այսինքն մանկավարժները, կամ դէմ են քննութիւններին, կամ ապացուցանում են, որ քննութիւններն անհրաժեշտ են: Իւրաքանչիւր դասատու իր համոզմունքներն ունի ու իր պատճառաբանութիւններն է առնում: Այս մանկավարժների այդ համոզմունքներից և պատճառաբանութիւններից մի ընդհանուր եղբայրացութիւն դուրս բերելու փորձն արաւ, «НОВОСТИ» լրագրի խօսքերով, Օստրոգորսկի Պետերբուրգի մանկավարժական մուշկի վերջին նիստերից մեկում:

Քննութիւնների պաշտպանության ժամանակ առաջին տեղը տրվում է կրկնողական դասընթացին: Իսկ քննութիւններին հակառակորդները, համաձայնվելով, որ կրկնողութիւնը և անցածի ընդհանրացնելը անհրաժեշտ է, մատնացոյց են առնում այն բանի վրա, որ կրկնողութիւնը կարող է և առանց քննութիւնների լինել, նա ինքն ըստ ինքեան գնահատել է և աշակերտների գիտու-

թիւնը լեւանդաններով դնահատելու կարիք չը կայ:

Քննութիւնների հակառակորդները համաձայն են այն բանին, որ անհրաժեշտ է ստուգել աշակերտների գիտութեան չափը և թէ ուսուցիչը օրպիսի աշխուժեմա՞ր է անցել դասընթացը ուսումնական տարվայ ընթացքում: Աշակերտների գիտութիւնը անկարելի է գնահատել քննութիւնների ժամանակ տուած պատասխաններով: Իւրաքանչիւր աշակերտին պատասխանի համար շատ կարճ ժամանակ է տրվում: Բայց դրանից, քննութիւնների ժամանակ աշակերտների պատասխանները զանազան պատահական հանգամանքների են ենթարկված: Ինչ որ վերաբերվում է դասատուութեան աշխուժութիւնը ստուգելուն, այդ օտուդումը քննութիւնների ժամանակ ուսումնարանական գործին օգուտ բերել չէ կարող: Կարող է դասատուութեան պակասութիւնը յայտնվել այն ժամանակ, երբ այդ պակասութիւնն ուղղել արդէն ոչ կը լինի: Տարվայ ընթացքում պէտք է անաշոյ դասատուութիւնից ծագած վնասի առաջն առնել: Այնպատակ է քննութեան ժամանակ ցոյց տալ դասատուութեան պակասութիւնը:

Քննութիւնների համար անխղ նախապատրաստական աշխատանքների օգուտ դէմ մանկավարժները հետեւեալ պատճառաբանութիւններն են առնում. քննութիւնների համար պատրաստվելու ժամանակ աշակերտները անցածը չեն կրկնում և չեն ընդհանրացնում, այլ նորից են դասերը սովորում, կարգում են առանց որ և է կայի քննական տոմսակի միայն սկիզբը, այսպիսով անկապ և կցկտուր դադարաւ կազմելով տարվայ ընթացքում անցած դասընթացի մասին: Բացի վերոյիշեալ փաստերից, կան էլի ուրիշ շատ պատճառաբանութիւններ, որոնք ապացուցանում են քննութիւնների աննպատակ լինելը և վնասակարութիւնը: Մանկավարժներից շատերն ասում են, որ քննութիւնները առաջ են բերում ընդունակ, բայց ծոյլ աշակերտների մի առանձին տիպ: Նրանք տարվայ ընթացքում վատ են պարապում, բայց շատ գեղեցիկ են պատասխանում քննութիւնների ժամանակ: Քննութիւններն այդ դէպքում բոլորովին հակառակ են ուսումնարանի նպատակին, որչէ՛ք ընտելացնել աշակերտներին կանոնաւոր աշխատանքի: Աշակերտների ջլալին լարված գրութիւնը չափից անցնում է: Գարոցական վարչութիւնը շատ յաճախ ստիպված է լինում մի քանի աշակերտներին համար յետաձգել քննութիւնները նրանց հիւանդութեան պատճառով: Մի խօսքով, մանկավարժներից շատ շատերը դէմ են քննութիւններին և վնասակար են համարում քննութիւնները ուսումնարանի առաջադիմութեան գործին:

ՌՈՒՍԱՅ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, հոկտեմբերի 28-ին, Նոյա կայսերական Մեծութիւնների ամուսնութեան քան և հինգամեակի տոնախմբութեան օրը, թիֆլիսի արքունական թատրոնում, ռուսաց դրամատիական խումբը ցերեկվայ անվարձ ներկայացում տուեց: Թատրոնը լի էր թիֆլիսի աղայից գիմնադրանքի և կարգետնի կօրուսի աշակերտներով և նմանապէս օրիորդաց գիմնադրանքի ու ինստիտուտի աշակերտուհիներով: Ներկայացումից առաջ դրամատիական ամբողջ խումբը, սիրողների մասնակցութեամբ, երգեց «Вожже Царя Храни» ռուսաց ժողովրդական օրհներգը, որը հանդիսականութեանը և թատրոնի մի քանի անգամ կրկնեց: Այնուհետեւ ներկայացրին «На маневрах» կոմէդիան: Ներկայացումը լաւ անցաւ. թատրոնի դեռահաս այցելուները և այցելուհիները ի սրտէ ծիծաղեցան: Այնու ամենայնիւ, ցանկալի էր, նոյն իսկ մանկավարժական տեսակետից, որ «На маневрах» կոմէդիայի նման պիէսաները դուրս հանվէին մանուկների համար տրվող թատրոնական ընկերաւորութիւնը:

Զօրախաղի ժամանակ զօրապետ գեներալը իր հետերը օֆիցերներով տեղաւորվում է մի ընտանիքի ընտանքանում, և ահա սկսվում են սիրահարական գաղտնի յարաբերութիւններ, ընտանիքին պատկանող իրական սեռի անդամներ, դեռահաս օրիորդների և օֆիցերների մէջ և մինչև անգամ սիրահարական տեսութիւնները տեղի են ունենում գեներալի ծառաների և ընտանիքի աղայինների մէջ: Վերջը սիրահարվածները ամուսնանում են: Միթէ կարելի չէր

դեռահաս ուսանողներին և ուսանողուհիներին ուսուցիչութիւն պատճառելու համար հարուստ ռուսաց ընկերաւորութեան անկէ լուրջ և յարմար պիէսա ընտրել: Այս նկատողութիւնը մանաւանդ ստիպված ենք անել, քանի որ «На маневрах» պիէսան ներկայացրին անցեալ շաբաթ, հոկտեմբերի 19-ին, յօգուտ օրիորդաց գիմնադրանքի չըքաւոր աշակերտուհիների: Այդ ներկայացման ժամանակ էլ թատրոնի այցելուների մեծ մասը գիմնադրանքի աշակերտներ և աշակերտուհիներ էին:

Մի և նոյն օրը, երեկոյեան, թիֆլիսի արքունական թատրոնում տրվին Տամարիայի բենեֆիսին, ռուսաց դրամատիական խումբը ներկայացրեց «Откуда сыр-боръ загорѣлся», Ալեքսանդրովի երեք գործողութեամբ կոմէդիան և «Вечеръ въ Сорренто» Տուրգենևի մի գործողութեամբ կոմէդիան: Ներկայացումից առաջ թատրոնական օրկէստը նուագեց «Вожже Царя Храни» ռուսաց ժողովրդական օրհներգը, որը հանդիսականների պահանջմամբ օրկէստը կրկնեց: Ներկայացումը շատ լաւ անցաւ, մանաւանդ աչքի էին ընկնում իրանց ինկացի խաղով տ.տ. Տամարիայ, Մայկերովա և օրիորդ Նիկիտաի: Տիկին Տամարիայ հանդիսականների բուռն ծափահարութեամբ մի քանի անգամ բեմ կանչվեց և ստացաւ ծաղիկայ մի փունջ և մի քանի թանգագին ընծաներ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՌԵՐ

Յիշեցնում ենք հասարակութեանը, որ այսօր, շաբաթ օր, թիֆլիսի Աղետականների բանկի թատրոնում հայ դերասանական խումբը կը ներկայացնէ յօգուտ Ռուսաստանի ներքին նահանգների սովետ ազգաբնակչության Պօսիլիսի «Օրուան չարիք» (Злоба дня) յայտնի պիէսան, թարգմանութիւն Ս. Արծրունու: Սկիզբն է 7 1/2 ժամին երեկոյեան: Տեղերի գինը սովորական է: Ներկայացումը կը անանակցեն խմբի ամենալաւ ոյժերը:

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվայ գինը՝ 9 ռուբլի է, ինն և ութ ամսվայ գինը՝ 8 ռուբլի է, եօթ ամսվայ գինը՝ 7 ռուբլի, վեց ամսվայ՝ 6 ռուբլի, հինգ ամսվայ՝ 5 ռուբլի, չորս ամսվայ՝ 4 ռուբլի, երեք ամսվայ՝ 3 ռուբլի, երկու ամսվայ՝ 2 ռուբլի, վերջապէս մի ամսվայ գինը՝ 1 ռուբլի է:

Խնդրում ենք «Մշակի» ներկայ և անցեալ տարվայ բաժանորդներին, որոնք մինչև այժմ չեն հասցրել մեզ մեր լրագրի բաժանորդագրելը, որ բարեհաճեն վճարել մեզ իրանց վրա մնացած պարտքը: Տարին վերջանալու վրա է և կարծում ենք, որ ժամանակ է արդէն վերջացնել հաշիւները:

Այս օրերս լոյս կը տեսնի պ. Նազարեանցի տպարանից «Իվլինա» վերնագրով Գրիգոր Արծրունու վէպը (հոգեբանական էտիւդ), առանձին գրքով: Գրքովը բաղկացած է 106 երևից, տպված է ընտիր թղթի վրա և արժէ 50 կօպէկ, պօստի ծախսով հանդերձ: Գրքի մի հատ առնողը կարող է նամակով մեզ ուղարկել 50 կօպէկ պօստային մարկաներով, իսկ գրքովի մի քանի օրինակ առնողները պէտք է վճարեն, հաշիւն համաժողով, թղթադրամով: Գրքի «Մշակի» խմբագրութեանը: Թիֆլիսում, բացի մեր խմբագրութիւնից գրքովը կը ծախվի և Խիզէկէլի գրավաճառանոցում: Գաւառներում կօմիսիայով ծախվել գրքովը ոչ ոքին չէ տրվում:

Պ. Գ. Տէր-Գաւթեանց խնդրում է մեզ յայտնել հետեւեալը. «Թարգմանված են վրացերէն լեզուով Բաֆֆի («Սով»), «Անբախտ Հալիսիմէ» և «Սպանդանոց» վերնագրով վէպիկները, որոնք չուտվել լոյս կը տեսնեն առանձին գրքովով, հեղինակի պատկերի և կենսագրութեան հետ միասին»:

Հոկտեմբերի 31-ին առաջին անգամ ձիւն եկաւ թիֆլիսում: Բայց գետինն ընկնելով ձիւնը հալվում էր և միայն ցելս էր գոյացնում քաղաքին փողոցներում:

ԲԱՌՈՒՄԻՑ մեզ գրում են. «Շաբաթ գիշեր ծովի վրա սաստիկ արեւածութիւն կար, Կ. Պոլսից

եկող շոգեմաւը մեծ դժուարութեամբ կարողացաւ նաւահանգստին մօտենալ: Փոթորիկը այդ գիշերը ծովի վրայից ափը չարտեց մի քանի վերքիկ նաւակներ, մի մեծ առաքատաւոր նաւ աղով բարձրած նաւահանգստի պատին խփվելով ջրադուփուր եղաւ և ընկղմվեց. նաւատինները կարողացան ազատվել: Կ. Պոլսի մօտ այս օրերում ընկղմվել է մի առաքատաւոր նաւ իր ամբողջ էլէկտրոմով և բեռնով: Նաւը բարձրած էր կերօսին արկղներով: Վնասվել են նաւ ուրիշ նաւեր»:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են, որ հոկտեմբերի 24-ին Մոսկովայի Լադարեան ճեմարանը համեա կերպով տօնեց իր գոյութեան 76-ամեակը:

Մեզ գրում են ԱՐԿԵՐԻՆԻՑ հետեւեալը. «Այս տեղի պլա ս ու ու ս կ ի առված վաշտի օֆիցերները, բոխները և քահանան վճեցին նուիրել յօգուտ Ռուսաստանի սովետ ազգաբնակչության իրանց ամենական բռնկի 1900, սկսած ներկայ հոկտեմբեր ամսից մինչև օգոստոս ամիսը եկող 1892 թիւն»:

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎԻՑ մեզ հաղորդում են. «Տեղական հայոց դպրոցներից Արդութեան օրիորդաց երկդասեան, ու Աստուածածնի աղայոց երկդասեան և ս. Նշանի տղայոց միդասեան դպրոցները գտնվում են այնպիսի շէնքերի մէջ, որոնք ոչինչ յարմարութիւններ չունեն և ամօթ են բերում վարչութիւններին: Այս հանգամանքի վրա խիստ ուշադրութիւն է դարձրել թեմական տեսուչ հայր Մեկեան և շտապեցնում է Արդութեան դպրոցի հողաբարձութեանը, ինչպէս որ լինի աւարտելու նորակառոյց շէնքը, մինչև նոյեմբերի 15-ը տեղափոխվելու նպատակով: Ոչ պակաս ցաւալի է աննախաձեռնի պատկեր են ներկայացնում քաղաքիս դպրոցների ուսումնական պիտոյները, որոնց գլխովին վերանորոգելու համար դեռ անցեալ մարտին նոյն թեմական տեսուչը դպրոցների հողաբարձութեանը մի առանձին յանձնաժողով կազմեց, սակայն մինչև այսօր ոչինչ չէ արել այս վերջինս: Արդէն բոլորովին աւարտված վերջացրած է յաջողարանը, որ հիմքի նոր է շինված և շատ գեղեցիկ է ու յարմար է»:

ԲԻԻՒԱԿԻՒԱՐՍԻՑ գիւղից մեզ գրում են. «Սերուս կատարվել է մեր գիւղում մի սարսափելի ոճրագործութիւն: Մի տան մէջ մարդու, կնոջ և իրանց պսակված աղջկայ ձեռքով, իրանց 5 տարեկան տղայի ներկայութեամբ սպանվել է մի մարդ ամենաքաղաքաւոր տանջանքներով ու ասիական դարձելի եղանակով: Երեքն էլ բանտարկված են. գործը քննվում է: Պատճառն առ այժմ յայտնի չէ, թէ շատերը այդ յանցանքը սիրային յարաբերութիւնների հետեանք են համարում»:

ԲԱՇՇԻՒԱԿԻՑ հաղորդում են մեզ. «Հոկտեմբերի 24-ին մեր դպրոցն այցելութեան եկաւ Երեւնի թիմի տեսուչը, աշակերտներին հարցաքննութիւնների ենթարկեց բազմաթիւ այցելուների ներկայութեամբ և շատ գոհ մնաց: Հարկաւոր հրահանգութիւնները հողաբարձութեան և ուսուցիչներին տալուց և հասարակութեան յօրհորները զարուց յետոյ, գնաց Փիրուսալի»:

Մեզ գրում են հետեւեալը. «Շիրակում քանի քանի գիւղեր կային, որոնք 2—3 կամ անկ տարի առաջ իրաւունք էին ստացել եկեղեցական դպրոցներ բանալու, բայց մնացել էին անուշադիր և բացումը տեղի չէր ունեցել, օրինակ, Ռուզուք-Քիւլիսայ գիւղը, ուր այս տարի կանոնադրապէս դպրոցը բացվում է. նմանապէս Փարլիվանը, Գօշավանը, Փիրուսալին, Դահալին և այլն: Գիւղական դպրոցները վերջին տարին բարեփոխվել են և՛ շէնքերի և՛ ուսումնական պարագանքի կողմից — սրբատաշ քարից շինութիւն, 2 հոգու նստելու սեղաններ, գեղեցիկ քարեաւաքաւաններ, նոյն իսկ գիւղերում համադրեան և այլն»:

«Իվլիսի» լրագրին Թէլաւից գրում են հետեւեալը. «Գինու բերքը այս տարի շատ է, և ահա վախառուները սկսել են օգուտ քաղել հանգամանքից, գրեթէ ձրի խելով գիւղացիները արխանքաւանքը. վախառուների անգործութեան պատճառով այդ կողմերի գիւղացիների մէջ տիրում է լաց ու կոծ, այն վախառու, որը գիւղ

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1—3

1—5

1—3

2-2

30—150

5—5

(7)

40—50 (2)

3-6 (k. 7.)

9-10

Միակ պահանջն էր՝ դուրս գալ Երևանից՝

9-2

3-5